

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/3

29 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց Մհեր Անդրիասյանի 10.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ 26.03.2014 թ-ի թիվ 2125150 ստուգման ակտի դեմ:

Մհեր Անդրիասյանի գանգատում բերված փաստարկները.

Ըստ Մհեր Անդրիասյանի գանգատի, նա կատարում է փայտի փորագրություն ավտոմատ ղեկավարվող հաստոցի միջոցով, այսինքն՝ աշխատանքը կատարում է ամբողջովին ինքնուրույն՝ համակարգչի ղեկավարմամբ: Աշխատանքն իրականացվում է Ա.Խաչատրյան 8 հասցեում, որտեղ բնակվում է ընտանիքի հետ, այդ թվում եղբոր՝ Նժդեհ Անդրիասյանի հետ:

Գանգատաբերը հերքում է այն ստուգման ակտով առաջադրված մեղադրանքը, թե իբրև Նժդեհ Անդրիասյանը՝ իր եղբայրը, իր մոտ աշխատանք է կատարում: Մասնավորապես, սույն թվականի մարտ ամսին հարկային տեսուչները ստուգումներ իրականացնելու նպատակով այցելել են իր տուն, թակել են տան դուռը, որը նաև հանդիսանում է իր արտադրամասի մուտքի և ելքի դուռը: Եղբայրը, որն այդ ժամանակ հորաքոջ հետ գտնվել է տանը, բացել է դուռը: Հարկային տեսուչները, լսելով աշխատող հաստոցի ձայնը սխալմամբ ենթադրել են, թե Նժդեհ Անդրիասյանը այդ պահին աշխատանք է կատարում: Սակայն իրականում Մհեր Անդրիասյանը պարզապես տանից դուրս գալուց առաջ միացրել է հաստացը, որը աշխատում է ինքնուրույն՝ տրված ծրագրին համապատասխան, և գնացել իր գործերով:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված բոլոր փաստերը և այն, որ հարկային տեսուչները ոչ մի փաստացի ապացույց չունեն, որ իր եղբայրը աշխատում էր, Մհեր Անդրիասյանը խնդրում է ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 19.02.2014 թ-ի թիվ 2125150 հանձնարարագրի Մհեր Անդրիասյանի մոտ իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ 26.03.2014 թ-ի թիվ 2125150 ստուգման ակտ (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 1-ին կետով արձանագրվել է հետևյալը: Մասնավորապես, ստուգմամբ պարզվել է, որ ք.Էջմիածին, Ա.Խաչատրյան 8 հասցեում գտնվող արտոնագրային վճար վճարող ֆ/ա Մհեր Անդրիասյանին պատկանող փայտի փորագրման արտադրամասում փաստացի աշխատանք կատարող Նժդեհ Անդրիասյանի աշխատանքի ընդունումը ձևակերպված չէր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Արդյունքում կիրառվել է «Եկամտային մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի ա) ենթակետով նախատեսված պատասխանատվության միջոցը և գանձման է առաջադրվել 60.000 դրամ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում Մհեր Անդրիասյանի նկատմամբ կազմված ստուգման ակտով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, հետևապես առկա է ընկերության համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության փաստը: Այսինքն, ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Սույն բողոքի քննարկման ընթացքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ տվյալ դեպքում Նժդեհ Անդրիասյանին որպես չգրանցված աշխատող դիտարկելու արդյունքում եկամտային հարկի գծով լրացուցիչ պարտավորությունը ստուգման ակտով առաջադրվել է վերոգրյալ օրենսդրական նորմի, այն է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց առաջարկվեց Հանձնաժողովին ներկայացնել այն ապացույցները, որոնք և հիմք են հանդիսացել ստուգման ակտի 1-ին կետում նկարագրված խախտումն արձանագրելու համար, սակայն, ըստ էության, որևէ հիմնավոր ապացույց չներկայացվեց:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն. «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել»:

Իր հերթին, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Մհեր Անդրիասյանի 10.04.2014 թ-ի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՏՏ 26.03.2014 թ-ի թիվ 2125150 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ